ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

06 օգոստոսի, 2018թ. Երևան

ՔՀԿ ինկուբատորների մասնակիցները հանդիպումներ ունեցան ՊԵԿ փոխնախագահի և գյուղատնտեսության փոխնախարարի հետ և քննարկեցին ոլորտային հարցեր

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում ՔՀԿ ինկուբատորների մասնակիցները օգոստոսի 2-ին հանդիպում ունեցան պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) նախագահ տեղակալ Արթուր Մանուկյանի, իսկ օգոստոսի 6-ին՝ գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանի հետ:

Հանդիպումներին նախ ներկայացվել է «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի նպատակներն ու դրա շրջանակում կատարված աշխատանքները, այնուհետև քննարկումներ են եղել ոլորտային խնդիրների վերաբերյալ:

ՊԵԿ փոխնախագահ Արթուր Մանուկյանի հետ հանդիպմանը Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիայի նախագահ Սաթիկ Բաղեյանը նշել է, որ ներկայումս զբաղված են փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման վերաբերյալ նոր ռազմավարության մշակմամբ և այդ գործընթացում կարևորվում է ՊԵԿ-ի հետ համագործակցության անհրաժեշտությունը: Արթուր Մանուկյանը պատասխանել է, որ պատրաստակամ են անհրաժեշտ օգնություն տրամադրել:

Բարաձայնվել է մարզերում փոքր և միջին ձեռնարկություններին ոլորտային փոփոխությունների մասին իրազեկելու, ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկություններ տրամադրելու համակարգի վերաբերյալ: Ի պատասխան ՊԵԿ փոխնախագահը նշեց, ՊԵԿ-ի աշխատողները պարբերաբար հանդիպումներ են կազմակերպում Երևանում և մարզերում և իրազեկումներ իրականացնում՝ կապված ՀՀ հարկային օրենսդրության հետ:

Ինչ վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ հարցին, ապա, նրա խոսքով, չնայած այն հանգամանքին, որ ՊԵԿ-ի պաշտոնական կայքէջը հատուկ հնարավորություններ չի նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար, այդուհանդերձ թեժ գծերի համակարգը հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն է ընձեռում զանգերի միջոցով արդյունավետ կերպով ստանալ ՊԵԿ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:

Գյուղատնտեսության նախարարությունում հանդիպման ժամանակ փոխնախարար Գառնիկ Պետրոսյանը հայտնեց, որ ամեն ինչ արվում է փոքր և միջին գյուղացիական տնտեսությունների վրա շեշտը դնելով պետական մակարդակով աջակցել մարզային, համայնքային գյուղատնտեսության տարբեր ոլորտների զարգացմանը: Նաև պետք է մեծացնել քաղհասարակության մասնակցությունը այս գործընթացներին:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Միջոցառման ընթացքում «Համայնքի զարկերակ» ՀԿ ներկայացուցիչ Արտուշ Խաչատրյանը ներկայացրեց իրենց համայնքում նոր մշակաբույսերի՝ հատկապես բրոկոլիի ստեղծման փորձը: Առաջարկներ հնչեցին, որ պետք է հիմնադրել ինտենսիվ պտղատու այգիներ և այդ կերպ փորձել զարգացնել պտղաբուծությունը:

Քննարկվեց նաև կաթիլային ոռոգման ցանցի տեղադրման, կարկտավտանգ տարածքների վերաբերյալ հարցեր: Փոխնախարարը նշեց, որ կաթիլային ցանցի տեղադրման հետ կապված 2% և 1 տարով վարկեր են տրամադրում: Այս ամենը մրցակցային գների նվազեցմանն է հասցնում: Նա հավելեց նաև, որ սուբսիդացիան կարելի է կազմակերպել հենց տեղում:

Միջոցառման քննարկման առարկա դարձավ ոլորտային մեկ այլ մեծ խնդիր՝ կապված ոռոգման ջրի մատակարարման հետ, որի պատճառը հիմնականում ջրի ցածր մակարդակն է: Առաջարկներ եղան արտահանողներին ու վերամշակողներին աջակցություն տրամադրել, մշակել հատուկ վարկատեսակներ:

Թե՛ ՊԵԿ-ում, թե՛ գյուղատնտեսության նախարարությունում հանդիպումներին կարևորեցին պետության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև կառուցողական երկխոսություն անցկացնելու անհրաժեշտությունը և համաձայնություն ձեռքբերվեց համագործակցության վերաբերյալ:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոպի» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կոալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղհասարակության փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարությանը՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք կուղղվեն հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ **9 թիրախային ոլորտում**, որոնք են արդարադատությունը, մարդու իրավունքները, հանրային ֆինանսների կառավարումը, բիզնեսը, կրթությունը, սոցիալական ոլորտը. հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառում, գյուղատնտեսությունը, տնտեսությունը, էներգետիկան:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունն իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայասատանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Աստղիկ Կարապետյան
Հանրային կապերի համակարգող

Հեռ.՝ 540199
Էլ. Հասցե՝ info@armla.am
Կայք՝ http://www.armla.am, http://ccd.armla.am

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: